		Եվրո սկսած 7.5%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 7.5 %-ից + փոփոխուն բաղադրիչ)
		Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ
		±4%, սակայն ոչ ավել քան 21%
		Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի տրամադրման պահից 36 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ
10.	Տոկոսադրույքի այլ պայմաններ	Վարկունակության պայմաններից /առանց վարկունակության գնահատման/ կամ այլ շեղումներով հայտերը Բանկի կողմից կարող են տրամադրվել 0.5% - 1.0%-ով բարձր տոկոսադրույքով:
11.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	«Վ» տարածքում գործող, ինչպես նաև ոչ ռեզիդենտ այլ բանկերի, վարկային կազմակերպությունների կամ այլ ֆինանսական կառույցների կողմից վարկերի վերաֆինանսավորման դեպքում, մինչև պայմանագրի գործողության ժամկետի կետը մայր գումարի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարման դեպքում հաճախորդը վճարում է տուգանք՝ վաղաժամկետ մարվող մայր գումարի 3%-ի չափով: <sup>29</sup>
12.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:
13.	Վարկի տրամադրման եղանակը	<ul style="list-style-type: none"> <li>Անկանխիկ;</li> </ul>

<sup>26</sup> Անշարժ և շարժական գույքի նպատակային և գործառնական նշանակության բովանդակությունը որոշվում է այն պետության իրավունքով, որտեղ գտնվում է փոխալ գույքը, ընդ որում ձեռքբերվող անշարժ գույքը չի կարող դառնալ հիմնական բնակության վայր:

<sup>27</sup> Վճարային քարտերի միջոցով տրամադրվող վարկային գծի և օվերդրաֆտի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 60 ամիսը:

<sup>28</sup> Փաստացի տոկոսադրույքի մեծությունը/արժեքը կարող է նշվածից տարբերվել՝ կախված մարման գրաֆիկից և տոկոսադրույքի շեղումներից:

<sup>29</sup> Վերահսկողությունն իրականացվում է վարկային փաթեթը սպասարկող մասնագետի կողմից՝ անմիջական վերադասի հսկողությամբ:

		<ul style="list-style-type: none"> <li>• Օվերդրաֆտի դեպքում՝ Բանկում գործող վճարային քարտերի միջոցով:</li> </ul>
14.	Վարկի վերադարձելության ապահովման միջոցները	<p>ՀՀ տարածքում գտնվող Բանկի համար ընդունելի անշարժ գույք, տրանսպորտային միջոց, դրամական միջոցներ, այդ թվում՝ ավանդ, պարտատոմսեր /«Էվոկաբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկված կամ Պետական պարտատոմս, որոնց մարման ժամկետները չեն կարող վարկի մարման ժամկետից կարճ լինել/:</p> <p>Բացի անշարժ գույքի գրավադրումից վարկառուից կարող է պահանջվել նաև առնվազն մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն:</p>
15.	Վարկ/գրավ հարաբերակցություն	<ul style="list-style-type: none"> <li>• Բանկի համար ընդունելի անշարժ կամ շարժական գույքերի ապահովություն, որի դեպքում վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկվում է. Անշարժ գույք - գնահատված արժեքի մինչև 70% /առանց եկամուտների հիմնավորման դեպքում՝ 50%<sup>30</sup>/;</li> <li>• Տրանսպորտային միջոց - գնահատված արժեքի մինչև 70%, ընդ որում 60 ամսից ավել մարման ժամկետ ունեցող վարկերի դեպքում տրանսպորտային միջոցի գրավով ապավովված մասը վարկ/գրավ ընդհանուր հարաբերակցության մեջ չի կարող գերազանցել 50%-ը:</li> <li>• Դրամական միջոցների ապահովությամբ վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկվում է. Միևնույն արժույթներով՝ ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 95%; Այլ արժույթներով՝ ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 80%; Միևնույն արժույթներով՝ ձեռքբերված պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 80%; Այլ արժույթներով՝ ձեռքբերված պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 70%:</li> </ul>
16.	Ապահովագրություն	<p>Առանձին դեպքերում՝ կախված գրավի տեսակից կարող է պահանջվել գրավ հանդիսացող գույքի ապահովագրություն</p> <p>Յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով</p>
17.	Գանձվող վճարներ	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկի գումարի 0.5%, բայց ոչ պակաս, քան՝ 50 000 ՀՀ դրամը:</li> <li>• Վարկի գումարի կանխիկացման դեպքում գանձվում է կանխիկացման վճար ըստ Բանկում գործող սակագների:</li> </ul>
18.	Վարկի հաստատման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկի հաստատման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո:</li> <li>• Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացն ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:</li> </ul>
19.	Այլ պայմաններ	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկի տրամադրումը Բանկի կողմից մերժվում է, եթե ստացվելիք միջոցների նպատակը հակասում է Բանկի ՖՀԿ քաղաքականությամբ սահմանված նպատակայնությանը կամ պայմաններին:</li> <li>• 120 ամսից ավել մարման ժամկետով վարկերը տրամադրվում են արտերկրում անշարժ գույք ձեռք բերելու նպատակով:</li> <li>• Առանձին դեպքերում Բանկի որոշմամբ կարող է տրամադրվել Մայր գումարի մարման գծով արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 12 ամիս ժամկետով:</li> <li>• Վարկային գծի կամ օվերդրաֆտի դեպքերում Բանկի որոշմամբ կարող է սահմանվել վարկի մարման պարտադիր ժամանակացույց, ինչպես նաև մինչև 1.0% տարեկան տոկոսադրույք՝ չօգտագործված մասի վրա:</li> <li>• Առանձին դեպքերում Բանկը կարող է պահանջել, ձեռք բերվող բաժնեմասերը/գույքերը, որպես լրացուցիչ ապահովություն ավելացվեն հայցվող վարկի ապահովություններում, ընդ որում ՀՀ տարածքից դուրս գտնվող գրավի առարկաները չեն կարող մասնակցել վարկ/գրավ հարաբերության հաշվարկմանը:</li> <li>• Եթե ձեռք բերվող բաժնեմասերը ՀՀ-ում գտնվող կազմակերպության բաժնեմասեր են, ապա կարող է պահանջվել տվյալ կազմակերպության համար իրականացնել վարկային պատմության, ինչպես նաև այլ պարտավորությունների /հարկային պարտք, դատական վեճ և այլն/ առկայության ստուգում:</li> <li>• Բանկն իրականացնում է նպատակային մոնիտորինգ՝ վարկի նպատակային օգտագործումը ստուգելու նպատակով, որի համար վարկառուն ապահովում է բոլոր անհրաժեշտ պայմանները և տեղեկատվության ժամանակին ու ճշգրիտ տրամադրումը: Առաջին նպատակային մոնիթորինգն իրականացվում է լիազոր մարմնի կողմից սահմանված ժամկետներում, որից հետո կարող են սահմանվել տարեկան պարբերական նպատակային մոնիթորինգներ:</li> <li>• Վարկառուն Բանկի պահանջով ներկայացնում է վարկի օգտագործման նպատակայնությունը հիմնավորող անհրաժեշտ տեղեկավորություն /պայմանագրեր, համաձայնագրեր կամ այլ հավաստող փաստաթղթեր/: Ոչ նպատակային օգտագործման դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել վարկի ամբողջական վաղաժամկետ մարում:</li> </ul>

**Աշխատավարձային նախագծերի և դրանց շրջանակներում տրամադրվող վարկային սահմանաչափի միասնական պայմաններ**

*30 Երևան, Լոռի, Շիրակի և Կոտայքի մարզերում գտնվող անշարժ գույք՝ բնակարան, բնակելի տուն, փարածք /բացառությամբ արտադրական և գյուղատնտեսական նշանակության փարածքների/:*

1.	Ուվքեր կարող են դիմել	Բանկի վճարային քարտի միջոցով աշխատավարձ ստացող՝ 18 – 65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարին
2.	Վարկավորման ձև	<ul style="list-style-type: none"> <li>Վերականգնվող՝ ամսական նվազագույն մարման պահանջով օվերդրաֆառ</li> <li>Անուիտետային մարման գրաֆիկով վարկ</li> </ul>
3.	Վարկավորման գումար	100 000 – 10 000 000 ՀՀ դրամ, ոչ ավել քան փոխանցվող աշխատավարձի տասնհինգամսյա տիկ
4.	Մարման ժամկետ	12 - 60 ամիս
5.	Անվանական տոկոսադրույք	16 %
6.	Փաստացի տոկոսադրույք	17.24 %
7.	Տրամադրման եղանակ	<ul style="list-style-type: none"> <li>Օվերդրաֆառը տրամադրվում է Բանկի վճարային քարտերի միջոցով</li> <li>Մարման գրաֆիկով վարկը կարող է անկանխիկ տրամադրվել նաև ընթացիկ բանկային հաշվին</li> </ul>
8.	Վճարման վերջնաժամկետ	<ul style="list-style-type: none"> <li>Մարման գրաֆիկով վարկի դեպքում սահմանվում է հաճախորդի կողմից</li> <li>Օվերդրաֆառի դեպքում՝ յուրաքանչյուր ամսվա 16-ը (եթե տվյալ ամսվա 16-ը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վերջնաժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը)</li> </ul>
9.	Քաղվածքի օր	Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը
10.	Տոյժեր	<ul style="list-style-type: none"> <li>Ամսական նվազագույն վճարը կամ մայր գումարը վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.015% օրական</li> <li>Հաշվեգրված տոկոսները վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.1% օրական</li> </ul>
11.	Այլ դրույթներ	60 և ավել օրվա ընթացքում գործատուի կողմից աշխատավարձը և/կամ դրան հավասարեցված վճարները Բանկի քարտին չփոխանցելու դեպքում, վարկային պայմանագրում նշված տարեկան տոկոսադրույքի փոխարեն կիրառվում է նշված ժամանակահատվածի լրանալու օրվա դրությամբ անգրավ վարկատեսակով սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքը
12.	Տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

**Արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռք բերման ԱՊԱՌԻԿ (Գործողությունն ուժի մեջ է 24/07/2025թ.-ից)**

1.	Վարկի տրամադրման նպատակը	Արևային ֆոտովոլտային համակարգերի և ջրատաքացուցիչների ձեռք բերում:
2.	Ուվքեր կարող են դիմել	18 տարին լրացած ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:
3.	Վարկատեսակները	Պետության կողմից սուբսիդավորվող   Առանց պետական սուբսիդավորման
4.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ
5.	Վարկավորման գումար	300 000 – 5 000 000 ՀՀ դրամ
6.	Վարկի մարման ժամկետը	12 - 60 ամիս
7.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	0 - 21.5%
8.	Տարեկան փաստացի տոկոսադրույքներ	Առավելագույնը 23.5%
9.	Պետության կողմից սուբսիդավորվող տոկոսադրույք	<ol style="list-style-type: none"> <li>1) սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի 14% տոկոսադրույքի չափով.</li> <li>2) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի 12% տոկոսադրույքի չափով.</li> <li>3) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի 11% տոկոսադրույքի չափով.</li> </ol> Երևան քաղաքում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի 9 % տոկոսադրույքի չափով

10.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:
11.	Վարկի մարման ձևը	«Անուիտետային» կամ «Զսպանակաձև»
12.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Երրորդ անձի /անձանց/ երաշխավորություն (անհրաժեշտության դեպքում)
13.	Ապահովագրություն	Կարող է պահանջվել արևային կայանի ապահովագրություն, որի ծածկույթը պետք է լինի արևային կայանի ձեռքբերման գումարի չափով:
14.	Այլ պայմաններ	Մեկ բնակելի տան համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:
15.	Վարկի տրամադրման նախապայմաններ	Վարկի օգտագործումը պետք է լինի անկանխիկ տարբերակով,
16.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	1) Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 3 (երեք) Բանկային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: 2) Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) բանկային օրվա ընթացքում:

**Նոր (չօգտագործված) հեծանիվների ձեռք բերում՝ սուբսիդավորմամբ՝ ԱՊԱՌԻԿ (Գործում է մինչև 31/12/2027թ.)**

1.	Վարկի տրամադրման նպատակը	Հեծանիվի ձեռքբերում (հեծանիվի հետ միաժամանակ կարող է ձեռք բերվել սաղավարտ, ծնկների բարձիկներ և ձեռնոցներ)
2.	Ովքեր կարող են դիմել	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող, արհեստագործական, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների սովորողները և աշխատողները: Որպես վարկառու կարող է հանդիսանալ 18-ից 65 տարեկան կամ շահառուն (եթե աշխատող է) կամ վերջինիս ընտանիքի աշխատող անդամը:
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ
4.	Վարկավորման գումար	70,000 - 300,000
5.	Վարկի մարման ժամկետը	6 - 36 ամիս
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	16% -21%
7.	Փաստացի տոկոսադրույք	Մինչև 5.14%
8.	Պետության կողմից սուբսիդավորվող տոկոսադրույք	16%
9.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:
10.	Վարկի մարման ձևը	«Անուիտետային»
11.	Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ
12.	Վարկային հայտի ձևակերպման վայր	Գործընկեր կազմակերպության տարածք
13.	Հաճախորդից գանձվող այլ վճարներ	Վարկի տրամադրման և/կամ սպասարկման վճարներ չեն սահմանվում:
14.	Ժամկետից շուտ մարելու տուգանք	Վարկի վաղաժամ մարման դեպքում տույժեր չեն սահմանվում:
15.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացում	1. Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 3 ( երեք ) Բանկային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: 2. Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) բանկային օրվա ընթացքում:
16.	Այլ դրույթներ	1.Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը կարգավորվում են ՀՀ Կառավարության 2025 թ. մարտի 27-ի N 341-Ն որոշման դրույթներով և պայմաններով:

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է Բանկի «EvocaTOUCH» հեռակառավարման համակարգով հայտ ներկայացնելու միջոցով, անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով:
----	--------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

2.	Ովքեր կարող են դիմել	Բանկի ավանդատու հաճախորդներ	
3.	Սահմանաչափ	<ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ դրամով ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 95%</li> <li>• Այլ արժույթներով ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 80%</li> <li>• 50 000 ՀՀ դրամից սկսած</li> </ul>	
4.	Սահմանաչափի տեսակ	Վերականգնվող սահմանաչափով օվերդրաֆտ	Մարման գրաֆիկով վարկ
5.	Մարման ձևը	Վարկառուն պարտավորվում է վճարել կուտակված տոկոսագումարը մինչև քաղվածում նշված վերջնաժամկետը:	«Անուիտետային» «Միանգամյա»
6.	Մարման ժամկետ	3 օրից մինչև Բանկում գործող ժամկետային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտը	
7.	Արժույթ	ՀՀ դրամ	
8.	Անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամով ներդրված ժամկետային ավանդի դեպքում	Ներդրված ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույք գումարած 2%
		Այլ արժույթներով ներդրված ժամկետային ավանդների դեպքում	ՀՀ դրամի գծով Բանկում սահմանված ժամկետային ավանդի տարեկան առավելագույն տոկոսադրույք գումարած 2%
9.	Սահմանաչափի տրամադրման եղանակ	Անկանխիկ, օվերդրաֆտի դեպքում՝ Բանկի թվային կամ ոչ թվային վճարային քարտերի միջոցով	
10.	Օվերդրաֆտի դեպքում		
	Քաղվածքի օր	Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը	
	Վճարման վերջնաժամկետ	Յուրաքանչյուր ամսվա 16-ը (եթե տվյալ ամսվա 16-ը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վերջնաժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը):	
	Արտոնյալ ժամանակահատված	Չի տրամադրվում	
11.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Բանկում ներդրված ժամկետային ավանդի պայմանագիր: Ընդ որում, գրավադրվող ժամկետային ավանդի պայմանագրի և ակնկալվող վարկի գումարի տարբեր արժույթներ լինելու դեպքում, հաշվարկի համար հիմք է ընդունվում տվյալ օրվա դրությամբ գրավադրվող ժամկետային ավանդի պայմանագրի արժույթի համար ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը:	
12.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկի գումարի կանխիկացման դեպքում գանձվում է հաշվից կանխիկացման վճար՝ համաձայն Բանկում գործող սակագների	
13.	Տույժեր	Ամսական նվազագույն վճարը վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.015% օրական Հաշվեգրված տոկոսները վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.1% օրական	
14.	Տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է վարկյանների ընթացքում: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:	

**Ավանդի գրավով ապահովված օնլայն վարկ/օվերդրաֆտ**

**ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝**

- Տոկոսագումարների գծով հաշվարկները կատարվում են 365 օրացուցային օրերի համար: Եթե վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարում եք դրան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում,
- Հիփոթեքային վարկերի դեպքում Դուք իրավունք ունեք ժամկետից շուտ իրականացնել վարկի մասնակի կամ ամբողջական մարում, որի դեպքում Բանկի կողմից տույժեր չեն կիրառվում:
- Վարկի մարման ժամանակացույցը խախտելու դեպքում վարկի ժամկետանց մասի վրա կարող է կիրառվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որը ամրագրվում է վարկային պայմանագրով:
- Դուք իրավունք ունեք նախքան վարկային պայմանագիր կնքելը ծանոթանալ պայմանագրի նախագծի հետ:

- Կարևոր տոկոսագումարները հաշվարկվում են ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ հիման վրա, իսկ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգին (ՀՀ ԿՔ Կանոնակարգ 8/01) կարող եք ծանոթանալ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում ([www.cba.am](http://www.cba.am)):
- Բանկը Ձեզ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում Ձեր նախընտրած հաղորդակցման եղանակով 30-օրյա պարբերականությամբ կտրամադրի վարկի վերաբերյալ քաղվածք:
- Պայմանագրի գործողության ընթացքում բողոքներ ունենալու դեպքում կարող եք դրանք ներկայացնել Բանկին: Ձեր կողմից ներկայացված բողոքների քննության գործընթացը ներկայացված է <http://www.evocabank.am/> կայքում և Բանկի գործունեության վայրերում: Դուք հնարավորություն ունեք պայմանագրից բխող բողոք-պահանջները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ձեր իրավունքները կարող եք պաշտպանել նաև դատարանի միջոցով: Իրավունքների պաշտպանության գործընթացը նկարագրված է [www.evocabank.am](http://www.evocabank.am) կայքում և Բանկի գործունեության վայրերում տեղակայված «ԻՆՅ անել, եթե բողոք ունեք» ձևաթղթում:
- ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՁԵՐ ԿՈՂՄԻՅ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԿԱՏԱՐՄԱՆ, ԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՑԻՆ ԲՅՈՒՐՈՒՄ:
- **Վարկային պայմանագրով Ձեր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դուք կարող եք զրկվել անշարժ գույքի նկատմամբ Ձեր իրավունքներից:**
- ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ:
- Վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում, եթե ձեր վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավի արժեքը չի բավարարում, ապա Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կատարել վարկային պարտավորությունների մարումներ ձեր այլ գույքերի հաշվին:
- Հիփոթեքային վարկերի դեպքում դուք կարող եք պայմանագրային առաջարկը յոթ օր առաջ վերցնել Բանկից և մտածել, վերցնելուց յոթ օր հետո Բանկի հետ կնքել պայմանագիր:

### Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ

- Վարկային պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կազդի Ձեր ՎԱՐԿԱՑԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ վրա:
  - **ԻՆՅ է վարկային պատմությունը**  
«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն վարկային տեղեկատվությունը վարկային տեղեկատվության սուբյեկտի կողմից ստանձնված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկային տեղեկատվության սուբյեկտի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:  
Այն, որպես կանոն, օգտագործվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման, ինչպես նաև արտադրող և վաճառող կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ տրամադրված սկզբունքով («ապառիկ») ապրանքների/ծառայությունների իրացման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում:
  - **Որոնք են վարկային պատմության ձևավորման աղբյուրները**  
Վարկային պատմության ձևավորման աղբյուրներն են ԱՔՈՎ գործընկերները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաև՝ հանրային տվյալների բազաներից ՀՀ կառավարության սահմանված կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները), որոնք տրամադրում են վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ(տվյալներ):
  - **ԻՆՅ է վարկային բյուրոն**  
Վարկային բյուրոն իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկության (վարկային տեղեկատվության) հավաքագրում, մշակում, պահպանում, տրամադրում, ինչպես նաև դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն:  
Վարկային բյուրոյի ծառայությունների շնորհիվ յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ հնարավորություն է ստանում
    - ✓ Ժամանակին կատարելով իր ֆինանսական պարտավորությունները՝ կերտել դրական վարկային պատմություն և օգտագործել այն որպես ծանրակշիռ ակտիվ ֆինանսական ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու համար,
    - ✓ ճիշտ կառավարել սեփական ֆինանսական պարտավորությունները և մշտապես տեղեկացված լինել սեփական ֆինանսական պարտավորությունների կատարման ընդհանուր պատկերի մասին:
- Վարկային բյուրոյի ծառայությունները թույլ են տալիս վարկատուներին (բանկեր, վարկային կազմակերպություններ), ինչպես նաև տարածակետ վճարման սկզբունքով («ապառիկ») ապրանքներ վաճառող կամ ծառայություններ մատուցող կազմակերպություններին կանխելու վարկառուների/հաճախորդների կողմից ավելորդ պարտավորությունների ստանձնումը, կրճատելու անհուսալի պարտավորությունները և աջակցելու պարտավորությունների ժամանակին կատարմանը:
- **ԻՆՅ է վարկային զեկույցը**  
Վարկային զեկույցը գրավոր կամ էլեկտրոնային փաստաթուղթ է, որը պարունակում է վարկային տեղեկատվության սուբյեկտի (ֆիզիկական կամ իրավաբանական) և նրա կողմից ստանձնված տնտեսվարող կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:  
Ձեկույցը կազմված է ԱՔՈՎ գործընկեր կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա և արտացոլում է հարցման պահից վերջին 5 տարվա վարկային տվյալները:
  - **Որքան ժամանակ է պահպանվում վարկային պատմությունը**  
Համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթների, «վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն»:

**• Ինչպես բարելավել վարկային պատմությունը**

Նախ, անհրաժեշտ է լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց պարտավորությունների վճարումները: Բացի այդ, ներկա պահին գործող վարկերի մասով անհրաժեշտ է բացառել ժամկետանց՝ նույնիսկ մեկ օրվա կտրվածքով պարտավորությունների գոյացումը:

**• Ուր դիմել եթե վարկային պատմությունը սխալ է**

Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն՝ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին): Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում Իմ ԱՔՌԱ անձնական գրասենյակից: ԱՔՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել [www.abcfinance.am](http://www.abcfinance.am) և [acra.am](http://acra.am) հղումներով:

**Կարևոր տեղեկատվություն վարկային սքորի վերաբերյալ**

**• ԻՆչ է վարկային սքորը**

Վարկային սքորը դա վարկառուի վարկային պատմության, ինրպես նաև այլ գործոնների հիման վրա հաշվարկված հաճախորդի վարկունակության գնահատականն է: Վարկային սքորի հաշվարկի վրա ազդեցություն են գործում հետևյալ հիմնական գործոնները՝

Գործոն	Նվազեցնում է սքորը	Բարձրացնում է սքորը
Վարկային պատմությունը	Վատ վարկային պատմությունը նվազեցնում է վարկային սքորը	Լավ վարկային պատմությունը բարձրացնում է վարկային սքորը
Հաճախորդի եկամուտների մեծությունը, վարկային ծանրաբեռնվածությունը	Ցածր եկամուտներ և ծանրաբեռնվածությունը նվազեցնում է սքորը	Բարձր եկամուտները և ցածր վարկային ծանրաբեռնվածությունը բարձրացնում է սքորը

**Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման չափանիշները**

Դրական որոշման կայացման չափանիշները՝

- Մեր կողմից ընդունելի գրավադրվող գույքը և երաշխավորությունները,
- Մշտական բնակության վայրը,
- Կայուն եկամտի աղբյուրը,
- Դրական կամ չեզոք վարկային պատմությունը,
- Արժանահավատ և լիարժեք փաստաթղթերը:

Բացասական որոշման կայացման չափանիշները՝

- Ոչ արժանահավատ փաստաթղթերը ներկայացնելը,
- Բացասական վարկային պատմությունը,
- Եկամտի աղբյուրի ռիսկայնությունը (անկայուն եկամուտներ, ոչ հստակ պարբերականությամբ եկամուտներ),
- Գրավի պայմանագրի կամ երաշխավորության համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելը:

**Պետական տուրքեր և այլ ծախսեր**

Գրավադրման պայմանով վարկերի դեպքում առկա են հետևյալ վճարները

- Գրավադրվող գույքի գնահատում՝ 10 000-150 000 դրամ, կախված գույքի տեսակից, մակերեսից և գնահատող կազմակերպության սականգներից: Վճարը մուտքագրվում է գնահատող կազմակերպության հաշվին, գնահատումը իրականացվում է վարկի տրամադրումից առաջ,
- Նոտարական ձևակերպման ծախսեր՝ 10 000-30 000 դրամ (վճարումը կատարվում է նոտարական գրասենյակում),
- Գրավի գրանցման ծախսեր՝ անշարժ գույքի գրավի գրանցման դեպքում՝ սկսած 26,400 ՀՀ դրամից, եռակողմ պայմանագրով իրավունքների գրանցման դեպքում՝ սկսած 71,400 դրամից: Գրանցումը կատարվում է 4 աշխատանքային օրում: Ավելի կարճ ժամկետներում իրավունքների գրանցման սակագներին ծանոթանալու համար կարող եք այցելել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի [www.cadastre.am](http://www.cadastre.am) կայք:

- Գրավադրվող գույքի ապահովագրում (պահանջվելու դեպքում): Ապահովագրությունը պետք է կատարվի լիցենզավորված ապահովագրական ընկերությունների կողմից վարկի մնացորդի 0.15% – 2.5%-ի չափով: Ապահովագրության վճարը կախված վարկի մնացորդից և ապահովագրվավճարի տարեկան սակագնից կարող է յուրաքանչյուր տարի փոփոխվել: Ապահովագրության շահառուն պետք է հանդիսանա Բանկը:

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ**

Բանկը իր կողմից տրամադրած վարկի դիմաց հաշվարկում է տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախս՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- i – տարեկան փաստացի տոկոսադրույք,
- A – վարկի սկզբնական գումար,
- n – վարկի մարմանն ուղղված վճարի թիվ,
- N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ,
- Kn – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար,
- Dn – վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով:

Ենթադրենք բանկը սպառողին տրամադրում է վարկ հետևյալ պայմաններով՝

- Վարկի գումար – 700 000 ՀՀ դրամ,
- Անվանական տարեկան տոկոսադրույքը – 18%,
- Վարկի մարման ժամկետը – 12 ամիս,
- Վարկի մարման եղանակը – անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը մարվում է ամենամսյա հավասարաչափ),

Վարկի տրամադրման դիմաց առկա են վճարներ՝

- Վարկային հայտի ուսումնասիրման միանվագ վճար – 1 000 ՀՀ դրամ,

Անուիտետային եղանակով վարկի մարման դեպքում անհրաժեշտ է որոշել վարկի մարմանն ուղղված ամսական վճարի գումարը, հետևյալ բանաձևով՝

$$K = A \times \frac{(1+R)^P \times R}{(1+R)^P - 1}$$

Որտեղ՝

- K – ամսական վճար,
- A – վարկի սկզբնական գումար,
- R – տոկոսագումար (նշվում է ամսական տոկոսադրույքը, օրինակ՝ (18/12) / 100 = 0.015
- P – վարկի մարման ժամկետ (ամիսներով),

Յուրաքանչյուր ամիս վարկի մարման գծով ամսական վճարը կկազմի՝

$$700,000 \times \frac{(1+0.015)^{12} \times 0.015}{(1+0.015)^{12} - 1} = 64,176$$

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես K1 լրացվում է Վարկային հայտի ուսումնասիրման միանվագ վճարը 1 000 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$700,000 = \frac{1,000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{64,176}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{64,176}{(1+i)^{\frac{61}{365}}} + \dots + \frac{64,176}{(1+i)^{\frac{365}{365}}}$$

$$i = 0.1995 \times 100 = 19.95\%$$

Բանկի կողմից առաջարկվող վերոհիշյալ պայմաններով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 19.95%:

**Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ չներառվող վճարներ՝**

- Նոտարական ծնակերպման վճարներ,
- Գրավի գրանցման վճարները,
- Կանխիկացման վճարները,

**Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկ՝**

	Անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամարներ	Էլ. փոստի հասցե
1	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 51.53, տարածք 47, 48, 50	+374 10 543134	<a href="mailto:info@ingoarmenia.am">info@ingoarmenia.am</a>
2	«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ	ք. Երևան, Ավետ Ավետիսյան փող. 116/1, թիվ 116/5	+374 10 539457 +374 10 539468	<a href="mailto:nairi@nairi-insurance.am">nairi@nairi-insurance.am</a>
3	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1	+374 10 591010	<a href="mailto:info@liga.am">info@liga.am</a>
4	"ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ" ԱՓԲԸ	ք. Երևան, Արամի փող. թիվ 3 եւ 5	+374 60 580000	<a href="mailto:info@silinsurance.am">info@silinsurance.am</a>
5	«ԱՅ ԷՍ ԶԻ» ապահովագրական ՍՊԸ	ք. Երևան, Բեյլակով 5 շենք	+374 10 560392 +374 10 546860	<a href="mailto:isg@isg.am">isg@isg.am</a>
6	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փող., 16 շենք	+374 11 560404	<a href="mailto:info@armeniainsurance.am">info@armeniainsurance.am</a>
7	ՌԵՍՈ ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտասի պող., 62 շենք, 93-93/1	+374 60 275757	<a href="mailto:info@reso.am">info@reso.am</a>

**Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպությունների ցանկ՝**

	Անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամարներ	Էլ. փոստի հասցե
1	«ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏՏ» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան 48/1 Սախարով Բ/Կ	+374 10 546490 +374 98 944449	<a href="mailto:info@rvmconsult.am">info@rvmconsult.am</a>

2	«ԲԻԼԴ ԱՓ» ՍՊԸ	ք. Երևան, Ջաքյան 5-1	+374 10 547160, +374 91 177300	<a href="mailto:buildup@rambler.ru">buildup@rambler.ru</a>
3	«ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ» ՍՊԸ	ք. Երևան, Խանջյան 13/2	+374 10 544882 +374 91 471925	<a href="mailto:cost@consultant.com">cost@consultant.com</a>
4	«ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ » ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 8, թիվ 3	+374 99 588797 +374 43 588797 +374 10 588797	<a href="mailto:vm-rp@mail.ru">vm-rp@mail.ru</a>
5	«ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 17, թիվ 25 տարածք	+374 10 546490 +374 98 944449	<a href="mailto:finlaw@inbox.ru">finlaw@inbox.ru</a>
6	«ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան փող., 8 շենք	+374 10 542750 +374 10 542760	<a href="mailto:info@olivergroup.am">info@olivergroup.am</a>
7	«ԻՆԷՔՍ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Թամանցիների փող. թիվ 14 Իրավ. հասցե՝ ք. Երևան, Նար-Դոս 28	+374 41 042287 +374 96 042287 +374 94 042287	<a href="mailto:apresyan.expert@mail.ru">apresyan.expert@mail.ru</a>

#### Հարգելի Հաճախորդ՝

Հայտնում ենք Ձեզ, որ նախքան վարկային հայտ ներկայացնելը և վարկային պայմանագիր կնքելը, Դուք կարող եք Բանկի +374 10 605555 հեռախոսահամարին զանգահարելով կամ Բանկի գործունեության վայր այցելելով Բանկի աշխատակցից ստանալ բանավոր տեղեկություններ Ձեզ հետաքրքրող վարկային պրոդուկտի վերաբերյալ:

#### Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Լողացող տոկոսադրույքն այն անվանական տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝  $SL = SC + S\Phi$ , որտեղ՝

SL-Լողացող տոկոսադրույք,

SC- Հաստատուն բաղադրիչ,

SΦ-Փոփոխուն բաղադրիչ:

Բանկը տարին երկու անգամ փոփոխում է լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (SΦ) և այդ մասին տեղեկատվությունը ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը հրապարակում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (SΦ), կախված վարկի արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

#### ➤ ՀՀ դրամով հիմնական՝

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը: ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx>:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

➤ **ՀՀ դրամով երկրորդային՝**

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում **ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդների) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները:** Ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդներ) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Երկրորդային փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ **ԱՄՆ դոլարով հիմնական՝**

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում **ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month):** ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում **TSFR6M** հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ **ԱՄՆ դոլարով երկրորդային՝**

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում **ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույքները:** Ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

➤ **Եվրոյով հիմնական՝**

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում **Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքը (EMMI EURIBOR 6 Month):** Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում **EUR006M** հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ **Եվրոյով երկրորդային՝**

փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում **Գերմանիայի Եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության տոկոսադրույքը:** Գերմանիայի Եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում **YCGT0016** հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

**Առաջնայինից երկրորդային** փոփոխուն բաղադրիչի անցնելու դեպքում կարող է կիրառվել ճշգրտման գործակից: